



## **ԵԱՀԿ աջակցությանը Հայաստանի մարզերում կրացվեն Օրհուսի կենտրոններ**

ԵՐԵՎԱՆ, 6 հոկտեմբերի 2005թ.—Տարածքային հասարակական բնապահպանական տեղեկատվության կենտրոններ /Օրհուսի կենտրոն/ շուտով կգործեն Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզկենտրոններում՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ, որը այսօր ստորագրեց փոխըմբռնման հուշագրեր ՀՀ բնապահպանության նախարարության և համապատասխան մարզպետարանների հետ:

Կենտրոնները կաջակցեն հասարակության համար բնապահպանության առնչվող տեղեկատվությունը (ներառյալ ինտերնետի միջոցով) և արդարադատությունը առավել մատչելի դարձնելուն և այդ ոլորտում որոշումների կայացման գործընթացում հասարակության ներգրավման խթանմանը, որոնք 2001թ. Հայաստանի կողմից վավերացված Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնասյուներն են: Կենտրոնները նաև կնպաստեն բնապահպանական հարցերում թափանցիկ հասարակական միջավայրի ստեղծմանը. ինչպես նաև մարզում ընդհանուր ժողովրդավարեցմանն ու կառավարման բարելավմանը:

Մարզային Օրհուսի կենտրոններ ստեղծելու ահնրաժեշտությունը առաջացել է ԵԱՀԿ աջակցությամբ անցած տարի կատարված «Սյունիքի մարզի սոցիալ տնտեսական զարգացման հիմնական ուղղությանը» ուսումնասիրության առաջարկություններից էլնելով:

Կենտրոնները նաև կնպաստեն բնապահպանական քաղաքականության մշակման ոլորտում մարզային իշխանությունների և հասարակական կազմակերպությունների միջև կապի հաստատմանը, կխթանեն մարզի բնապահպանական կազմակերպությունների և նրանց հավանական գործընկերների՝ տեղական, միջազգային ու օտարերկրյա հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև գործարար համայնքի, միջև համագործակցության խթանմանը, կծառայեն իբրև հիմք բնապահպանական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների միջև կոալիցիայի ստեղծման համար:

Կենտրոնները կսկսեն գործել այս տարվա ընթացքում՝ հիմնվելով 2002թ. բացված Հարավային Կովկասում առաջին՝ Երևանի Օրհուսի կենտրոնի փորձի և մասնագիտական պատրաստվածության հիման վրա:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը աջակցում է Հայաստանում Օրհուսի կենտրոնների ցանցի ստեղծմանը, ինչը նպաստում է բնապահպանական խնդիրների և ժողովրդավարական մթնոլորտի գաղափարները միավորող Օրհուսի միջազգային կոնվենցիայի սկզբունքների և արժեքների խթանմանը: